ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ   ՆԻՒ ԵՈՐՔ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 30, 1894   Թիւ 16

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.   New York, N. Y.   Vol. IV, 1894

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
Կամ Redaction de la Revue "HAIK" են

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յետ Արհաւրաց Յուսոյ Նշոյլ:— ՀԱՅՔ պիտի հրատարակուի 1895ին.— Բացուած է ՀԱՅՔի Բաժանորդագրութիւնն 1895 թուականին — Պարտ է Յարատեւել.— Նամակ Կ. Պոլսէ, Անգլիոյ Դեսպանին և Բ. Դռան. — Թրքական Կոտորածն.— Ահազին Մասս-միթինկ և Մեծ Զայրացման արտայայտութիւն:— Միացեալ Նահանգք և Հայոց Կոտորածն.— Ն. Ե. Հէրալտ Թերթն.— Անգլիոյ և Ֆռանսայի Հայոց եռանդուն գործունէութիւնն.— Վնասակար Հրատարակութիւնք.— Ֆրէզնոյի Հայերն Կազմակերպուած.— Նամակ Ուուսնոքէթէ — Նիւ Եորքի Հայոց մէջ.— Համաժողով Հայոց յՈւստր.— Այլ և Այլք:

ՅԵՏ ԱՐՀԱՒՐԱՑ
ՅՈՒՍՈՅ ՆՇՈՅԼ

Հայ նահատակներու դուշմանց կը յաջորդէ Սասնոյ աւերակաց վերայ նստող անօթի որբիկներու անմխիթար լալիւնն, որոյ արձագանքն երկրէ յերկիր կ'անդրադառնայ յարաճուն սաստկութեամբ, և «Անասելի Անասունն» կը դողայ ի լուր այս անհուն որոտմանց:

Թուրքն արիւնաներկ չրթամբք ուրացումներ կը կակազէ և աշխարհ ե՛ս առաւել սրտմտած կը գոչայ նմա— Ծի՛ս ա՛ղ, Գազանի պէս փարատեցիր ու այժմ սատանի պէս կը ստե՛ս:

Քրիստոնեայ Ազգաց առջեւ Թուրքն կ'երեւի այժմ ճիշդ որպիսի է: Քաղաքակրթութեան փոշւով չպարեալ Օսմանցին վայրենի մ'է, և քաղաքակրթութեան անմիտ ու անամօթ թշնամին:

Քաշէ՛ արիւնաթաթաւ ձեռքդ Հայաստանէն եթէ չես ուզեր որ գլուխդ կտրեմք.— Այդ է ազգաց ցասմնալից աղաղակն դէպ ի Կ. Պոլիս:

Յոյս կայ ուրեմն, Հայ Հայրենասէրներ, յոյս կայ որ 1895ին, մեր վերջին թագաւորի մահուանէն ճիշդ 500 տարի յետոյ, նոր դար մի սկսի տառապեալ Հայաստանի համար և մեր սիրեցեալ Հայրենեաց վերաշինութեան ձեռնարկուի:

Մեր ամենուս վերայ ահագին պատասխանատուութիւն կը ծանրանայ: Անեմք մեր զոհողութիւններն ծայրագոյն չափով և թափեմք մեր գերագոյն ճիգերըն, չիցէ՛, ո՛հ, չիցէ՛ թէ այս թանկագին առիթն ալանցնի անպտուղ և անդարձ, և յուսոյ նշոյլն նորէն թանձրացող խաւարի մէջ ընկղմի առ յաւէտ:

ՀԱՅՐ

ՊԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 1895ԻՆ

Հայքասիրաց Նորակազմ միութիւնն բաւական զօրաւոր չէ դեռ, և ցարդ մի քանի ուրիշ տեղերէ եղած խոստմունք անբաւական են, ի վերայ այսր ամենի որոշեցինք թերթիս հրատարակութիւնն շարունակել։

Հայրենեաց այս ահագին ճգնաժամին, այսպիսի պատմական մեծ վայրկենում, մեք անկարող եմք լռել։

Մեք չեմք կարող լռել այն համոզմամբ թէ ժողովրդի լուրջ մասին խորհրդոց և զգացմանց թարգմանն է ՀԱՅՐն, և թէ արժան է մեզ յուսալ ողջամիտ երիտասարդութեան ազդուագոյն և արդիւնաւոր աջակցութեան։

Բացուած է ՀԱՅՐի բաժանորդագրութիւնն 1895 թուականին

1. ՀԱՅՐի տարեկան բաժնեգինն է երկու տոլար կամ տասն ֆրանք։

2. Այն ամեն Ամերիկաբնակ ազգայինք որք բաժանորդ լինիլ կ'ուզեն, կը խնդրեմք որ մինչև Յունուար 10 կամ, ամենէն ուշ, 14 մեզ հասցուցնեն իրենց տարեկան բաժնեգինն։

3. Կան հին բաժանորդք որք կը մտածեն թէ բնականապէս հասկացուած է թէ իրենք նոր տարւոյ բաժանորդ են, և կը ցաւին եթէ թերթ չյղուի իրենց։ Այդ սխալ է, և մեծ չփոթութեան աղբիւր։ Մեք այժմէն կ'ասեմք թէ պէտք է նորոգել իսկոյն, զի մինչև Յունուար 14 մեզ հասած անուններուն միայն թերթ պիտի յղեմք։

4. Ամերիկայէն դուրս մեր հին բաժանորդներուն պիտի չարունակեմք յղելայնքան ժամանակ որքան իւրաքանչիւրի հեռաւորութիւնն կը պահանջէ բաժանորդագրութիւնն նորոգելու համար։ Այն ժամանակէն անդին կը դադրիմք հին տոմարին հետևիլ։

5. Ամերիկայի բաժանորդք հասարակ նամակի մէջ թղթադրամ ծրարելով կը յղեն երբեմն, որ երբեմն կը կորնչի։ Պէտք է նամակն ըէճիսթրը անել կամ թէ մրնի օրտրը կամ չէք յղել։

6. Կը խնդրեմք որ մրնի օրտրրի կամ մանտատը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուցնելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

7. ՀԱՅՐի հրատարակութեան յաճախութիւնն և երևոներու թիւն համեմատական պիտի լինի բաժանորդաց թուոյն։

8. Մեր բարեկամք—ոչակիցք և Հայքասիրաց անդամք թող հաճին այս երկու շաբաթներուս մէջ բաժանորդներ գտնելու իրենց բոլոր ջանքն անել։ Աւելի լաւ է որ իրենց թերթին յաջողութեան և օգտակարութեան համար ամենայն ճիգ թափեն տարւոյն սկիզբն քան թէ մեզի հետ յոգնին բոլոր տարին։

ՊԱՐՏ Է ՅԱՐԱՏԵԻԼ

Տարիներէ ի վեր Համիտի կառավարութիւնն մեթոտօրէն կը ճմլէր կը սպառէր Հայ ժողովուրդն, և մեր բոլոր աղաչանք և բողոքարկութիւնք առ Եւրոպա կը մնային ձայն բարբառոյ յանապատի։ Աշխարհի թմրած խիղճն ընդոստուցիչ խայթով մի արթնցուցնել հարկ էր, զոր յանգէտս յանձն առաւ նոյն ինքն Բ. Դուռն՝ մի քանի աւուր մէջ մի քանի գաւառակներ չիք անելով կատաղի վայրագութեամբ։ Աշխարհ համոզուեցաւ թէ այս բարբարոսութիւնն ոչ թէ դիպուածական բան մի այլ օսմանեան վարչութեան բարբարոս դրութեան հետ խորին կապակցութիւն ունեցող արարուած մ'էր։ Սուլթանն Զէքի փաշայի կուրծքն չքանչանով զարդարելովն՝ ինքն իւր ձեռքով անմեղներու արիւնն իւր ճակատին քսած եղաւ և այժմ իբրեւ ճիւաղակերպ երեւոյթ մի աշխարհի աչքին կը զարնէ ինքն ու իւր պետութիւնն։ Ժողովուրդք կը գոչեն ամենուստ թէ զթութիւն, իբրեւ անտանելի արատ քաղաքակրթութեան, պարտ է ջնջել բառնալ ի միջոյ։

Սակայն ժողովրդային կայրութի այս անկեղծ արտայայտութիւններն պէտք չէ չփոթել կառավարութեանց խորհրդոյն հետ։ Կառավարական մարդիկ ամեն երկրի մէջ ալ նուազ բարի և անկեղծ են քան

իրենց պատկանեալ երկրին լաւագոյն դասերն։ Անգլիա բաւական արթնցած է, և կառավարութիւնն Հայոց արդարութիւն անելու ջանքին մէջ անկեղծ կ'երեւի, բայց ուրիշ կառավարութեանց աջակցութեան կարօտ և բաղձացող է յայտնապէս։ Տեղի կայ նաև վախնալու թէ Անգլիա դոհ պիտի լինի չարագործ Զէքի փաշան և մի քանի Պէյեր կախել տալով, որպէս Թայմզի խմբագրականէն կրնայ մակաբերուիլ։ Այդչափ միայն արդարութիւն անել՝ պարզապէս անիրաւելիքը լինի Հայաստանի որ բիւր մի զոհեց միահաղոյն և մնացեալ բիւրաւորք ալ տակաւ կը սպառին։ Անշուշտ և մեք կը պահանջեմք որ Զէքի և իւր մեղսակիցք սպառակուին, բայց և միանգամայն կը պահանջեմք յանուն մարդկութեան որ նոցա կենդանի ընկերներուն դէմ վերջնապէս փակուին Հայաստանի դռներն։ Մեզ հարկաւոր է արմատական դարման, քրիստոնեայ և քաղաքակիրթ կառավարութիւն փոխանակ մահմետական և բարբարոս կառավարութեան։

Անգլիա, Ռուսիա և Ֆռանսա հաւանեալ կ'երեւին բան մի անելու, թէպէտ տակաւին չէիք գուշակել թէ ինչ է իրենց դիտումն Հայաստանի լինելու վերջնական արդարութեան մասին։ Աւստրիա և Գերմանիա, ըստ մասին թշնամութեամբ դէպ ի Ռուսիա և Անգլիա, անկարելիոյ կը մընան։ Պէտք է որ Հայոց կողմանէ մեծ ջանք լինի Աւստրիոյ և Գերմանիոյ մէջ հանրային կարծիքն շարժելով կառավարութեանցն ազդել։

Պէտք է կասկածիլ միշտ կառավարութիւններէն, և միշտ շարունակել շարժել ժողովուրդներն։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

ԱՆԳԼԻՈՅ ԴԱՍՊԱՆՆ ԵՒ Բ. ԴՈՒՌՆ

Կ. Պոլիս, 3 Դեկտ. 1894

Խմբագիր ՀԱՅՐԻ, ի Նիու Եորք։

Սայդ և ուղղակի աղբիւրէ ունիմ ձեզ հաղորդել հետեւեալն, որ մեր ներկայ յուզմանց մէջ շատ կարեւոր բան մը կը պարդէ, այսինքն Անգլիոյ դիրքն Հայկական խնդրոյն նկատմամբ։

Երբ Սըր Ֆիլիփ Փըրրի, Մեծին Բրիտանիոյ դեսպան, իմացաւ Սասունի ահաւոր դէպքն, ստուգեց նախ անգլիական հիւպատոսէն տեղեկութիւն խնդրելով և ստանալով։ Եղելութեանց ճշմարտութեանցն այսպէս համոզուած՝ ներկայացուցմարաւ Դրան և անկէ ալ լուր ուզեց։ Այսպիսի լուր ուզելն հաշիւ պահանջելու պէս բան մ'է երբ Անգլիոյ դեսպանին կողմէն կ'ուզուի։ Դուռն բացարձակապէս ժխտողական պատասխան տուաւ, թէ այնպիսի բան չէ պատահած, թէ լուրն բոլորովին սխալ է և անհիմն։

Դեսպանն այս պատասխանին վրայ բարկացաւ և խսկոյն ծանոյց Արտաքին Գործոց Օսմանեան Նախարարին թէ իրեն ըսելիք ունի, պէտք է դեսպանատուն գայ։

Նախարարն փութաց անձամբ գալ դեսպանին, և հոն կարուկ, կծու և մինչև իսկ բարկացայտ ոճով կը խօսի դեսպանն առ Նախարարն և կը յայտարարէ թէ իւր քարտուղարն պիտի անմիջապէս ճանրայ հանէ դէպ ի Սասուն՝ ի քննել ամեն ինչ։ Եթէ, կ'ասէ, մեր հիւպատոսի տեղեկագիրը սուտ հանուի, նա պիտի կրէ իւր պատիժ իսկ եթէ քու ուրացումներդ սուտ ելնեն, դու պիտի կրես պատիժդ։

Նախարարն որոմտած և գլխիկոր կը դառնայ ետ, և շուտով խորհրդածութիւն կը կատարեն։ Արագ պատասխանով մը կը խնդրեն դեսպանէն որ բարեհաճի չյղել իւր քարտուղարն ի Հայաստան։

Այս ստուգապատում տեղեկութենէ կը տեսնէք թէ Անգլիոյ դեսպանն զայրացած է Թուրք կառավարութեան խաբեբայ ընթացքին դէմ այս գործին առաջին օրէն և ուստի բանաւոր է յուսալ թէ անգլիական կառավարութիւնն խստիւ և մեծ փութով պիտի կատարէ քննութիւնն և պիտի բերէ ի լոյս Դրան այս ոճիրն իւր պժգալի մանրամասնութեամբք։

ԻՐԱՋԵԿ

ԹՐՔԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆ

(«Ինտիպէնտէնթ» Նոյ. 18ի թուոմն կասկածով և քիչ համակրութեամբ կը խօսէր, իսկ Նոյ. 29ի թուոյն մէջ լեզուն բոլորովին փոխեր է, բոցեղէն է դարձեր,

որպէս կը տեսնուի հետեւեալ նմոյշ տողերէն :)

«... Երզնկայի զինուորական հրամանատարն, հարիւր մղոնի ճանապարհն կատաղի արագութեամբ կտրելով հասած է ի Սասուն, և, կ'ասեն, իւր կուրծքէն կախած է, զօրականին կարդալէ յետոյ, հրովարտակ մի Կ. Պոլսէն եկած որ կը հրամայէր ջարդել ջնջել զՀայս յարմարոյ, ի սէր իրենց Թագաւորին և կառավարութեան :... Մեզ հասած տեղեկութիւնք, կատարելապէս վստահելի աղբիւրէ, այնքան սոսկալի են որ մարդ կ'ամաչէ պատմելու : Կանայք և աղջկունք հարիւրներով յլկուած են ու ապա մորթուած : Կը կարծուի թէ հինգէն մինչև տասն հազար ըսպաննուած են : Եթէ այս տեղեկագրութիւնք բուն Հայերէն եկած լինէին մեզ, կրնային չափազանցուած կարծուիլ : Այս եղելութիւնք բացատրութեան կարօտ չեն : Պարզապէս կը նշանակեն թէ վերջն եկած է, և թէ Թրքական վարչութեան դրութեանն պէտք է վախճան տալ, այն վարչութեա'ն որ իրեն գործի արած է այս տարիներս երկրիս երեսին վերայ գտնուած բարբարոսաց քան զամենայն բարբարոս տարրերն, յոռեգոյն քան Ափրիկէի և հարաւային ծովուն վայրագագոյն ցեղերն : Քանի որ Վանայ անգլիական հիւպատոսն հաստատած է վայրագութեանց լուրն... յոյս կայ որ որոշ արդիւնք մի յառաջ գայ և որ Սուլթանն և իւր խորհրդականք հասկնան թէ այլ ևս չեն կրնար աշխարհիս բովանդակ մարդկութեան առջև այնպիսի լիրբ անպատկառութիւն գործել : Արմատական միջոցներ պէտք է ձեռք առնուլ, և ձեռք առնուլ վաղ ընդ փոյթ : Որոնք որ պատասխանատու են այս հրովարտակին համար, ոյք և լինին, քուրդ ցեղապետք, տեղական կառավարիչք, զինուորական փաշայք կամ պետական նախարարներ, պէտք է պատժուին եթէ ոչ Թուրք կառավարութիւնն լմնցած է, և Եւրոպա պիտի մտնէ ու իւր իսկ ձեռքն առնու ղեկավարութիւնն այն երկրին որ աշխարհի ճոխագոյններէն մին է, այլ սակայն չափազանց երկար ատեն մնացած է տգէտ և վայրագ բռնապետութեան մի ոտից տակ :»

ԱՀԱԳԻՆ ՄԱՍ ՄԻԹԻՆԿ ԵՒ ՄԵԾ ՁԱՅՐԱՅՄԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՑ

ի 18 Դեկտ. 1894

Չիքըրինկ Հօլի լայնատարած սրահն եռանդուն բազմութեամբ լեցուն էր Դեկտ. 18ի երեքշաբթի երեկոյին բողոքելու համար Թուրք կառավարութեան անասելի խժդժութեանց դէմ :

Բեմին վերայ բազմած էին Նիւ Եորքի նշանաւոր քաղաքացիներէն 40 կամ 50 անձնաւորութիւնք և երեկոյին ատենախօսքն :

Տիար Վիքթոր Քոնսթանթ, բարեհամբաւ փաստաբանն, որ Միթինկին կազմիչ Յանձնախմբի ատենապետն էր, ժողովը բացաւ հրաւիրելով զՋօրավար Սուէյն ի նախագահել : Զօրավարն ի ձայն ծափահարութեանց ոտքի ելաւ և մի քանի ընտիր խօսքով Միթինկին նպատակն բացատրեց : «Մեր բողոքոյ ձայնն, ասաց, իրաւամբ կը հաւատամք թէ պիտի հնչէ Կ. Պոլսոյ մէջ :» Ո՞չ ապաքէն կանանց և դեռատի հարսանց բազմութիւն մի նահատակուած էր ի Սասուն, և նոքա իրենց վերջին շնչով Աստուած և Հայաստան հառաչած էին. պէտք էր որ մի կանացի ձայն բարձրանայր ի ժողովին և Հայաստանի Մօր սրտին կսկիծն ու մորմոքն արտայայտէր :

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԳ ՕՐ. ՊՕԶԷԻ

Ահա զայդ անել կոչուեցաւ Ամերիկացի շնորհագեղ և սքանչելաձայն օրիորդն Ֆլորէս Տի Վ. Պօզէ. (երգիչն Օլ Սօուլ" Չըրչի) և մելամաղձոտ և հոգեյոյզ շեշտով, ամենաքաղցր ձայնով, ուղիղ հայերէն արտասանութեամբ երգեց

Իմ Հայրենիք զիս կը կանչէ
Հեռու եմ Հայաստանէն...

եւ Թրթռացոյց, փղձկեց սրտերն, թափանձելով բովանդակ ներկայից հոգւոյն : Տիկին Տիմեան դաշնակ ածելով փափուկ և ճարտար կերպով օգնեց երգչուհւոյն և

եռանդուն ժափահարութեամբք ներկայից բազմութիւնն արտայայտեց իւր գնահատումն։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՏՈՔԹՈՐ ՈՒՕՐՏԻ

Երեկոյին առաջին ատենախօսն էր նշանաւոր արեւելագէտն Ուիլեըմ Հ. Ուօրտ, Ինտիփէնտէնտի Խմբագրապետն որ ընդարձակ ուղեւորութիւններ արած է յԱրեւելս։ Տր. Ուօրտ խօսեցաւ Սասնոյ կոտորածին վերայ գիտնոյ մի վայել լեզուով և խղղութեանց անտարակուսելի ստուգութիւնն հաստատեց։ «Հոս եկած եմ, ասաց, ի լսել արդի ժամանակաց քան զամենայն սոսկալի խժդժութեանց միայն նըկատմամբ, և այս խժդժութիւն մին է չորք մի բարբարոսութեանց որք կատարուած են մի և նոյն կառավարութեան ձեռքով։ Քուրդք կ'ապրին Հայոց կողոպուտով, և Քուրդերն տեսակ մի սոտիկանութիւն եղեր են որպէս զի կարենան աւելի դիւրաւ կողոպտել խաղաղ երկրագործներն։ Սասնոյ Հայերն միանգամ չեն հաճեր կողոպտուիլ և անձնապաշտպանութեամբ սպաննած են աւազակներէն մի քանին։ Օ՛, Հայերը ապստամբած են— կը սկսին գոչել Թուրք և Քուրդ և թեւ ու թեվնիք կը կարին. կառավարիչք կը մըրցին իրարու հետ արագագոյնս հասնելու և Սասնոյ կոտորածի գործն կատարելու համար։ Զարդին ահաւոր տեսարաններն աննկարագրելի են և աներեւակայելի։ ... Թուրք կառավարութիւնն ի՞նչ կ'անէ այժըմ.— Կ. Պոլսոյ պաշտօնական թերթք կը ծանուցանեն թէ կոտորածին առաջնորդ պաշտօնեայք չքանչանի արժանացած են։ Աշխարհ չի կրնար աչք գոցել այս սարսափելի ընթացքին (ծափք։) Կը հաւատամ թէ պարկեշտ Թուրք կառավարութիւն անյուսալի բան է (ծափք)։ Ես ինքնս աչքովս տեսած եմ հոն անհաւատալի զեղծումներ։ Ուրիշ կոտորածներու հետեւանօք Լիբանանու լաւ վարչութիւն տրուեր է և Պուլկարիոյ անկախութիւն։ Ժամանակ է որ Եւրոպիոյ իշխանութիւնն Հայոց համար ևս գործէ։ Պետութիւնք պատասխանատուութիւն յանձն առած են և սակայն բան մ'ալ չեն արած, և մեք պէտք է նոցա հարցնեմք թէ ինչ կ'անեն այժմ, Ուրախ եմ որ մեր կառավարութիւնն կը գործէ։ Բ. Դուռն կը մերժէ եղեր Տիար Ճիւէթի անուանումն իբրեւ քննիչ։ Թուրքն այնպիսի պարկեշտ մարդու հետ գործ ունենալ չի սիրեր։ Մեր կառավարութիւնն սակայն կրնայ, առանց պաշտօնական հասկացողութեան ալ, եղելութիւններն քննել, տեղեկագրել տալ իւր գործիչներու ձեռքով և շարժել զօրութիւններն։ Զայս պարտաւոր է մեր ազգն անել ոչ քաղաքական այլ բարոյական պարտաւորութեամբ։ Բարոյական պարտաւորութիւնն մեզ այնքան անկ է և պատշաճ որքան ո և է ուրիշ երկրի (եռանդուն ծափք։) Մեք պարտիմք սիրել Հայերն։ Միթէ այս երկրին մէջ Հայերն գինետանց, բանտից և աղքատանոցաց մէջ կը տեսնե՞մք երբէք։ Նոքա պարկեշտ, աշխատասէր, օրինապահ և խելացի են և պատուաւոր կեանք կը վարեն, և երբ քաղաքացի կը լինին մեր երկրին արժանաւոր քաղաքացիներ կը հանդիսանան (բուռըն ծափք)։ Թող ուրեմն խօսինք, թող խօսին մեր լրագիրներն, հանչցունեն ասոնց ցաւերն ու արժանիքն և օգնեմք ամենքս Հայաստանի բարւոք վարչութիւնն ապահովելու անյապաղ (երկար և սաստիկ ծափահարութիւնք։)

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ
ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆՑ

Յանձնախումբի քարտուղարն, Տր. Լիզանտէր Տիքըման, կարդաց նամակներըն այն մեծանուն կամ պաշտօնաւոր հըրաւիրելոց որք կանխակալ յանձնառութեանց պատճառաւ չատիկելով ներկայ լինիլ Միթինկին՝ իրենց համամտութիւնն և համակրութիւն արտայայտած էին պատուական նամակներով։

Ահաւասիկ թղթակցաց անուանքն.

Տր. ԼԱՅՄԸՆ ԷՊՊՈԹ— համբաւաւոր հեղինակ և երէց, խմբագրապետ «Աութլուքի։»

Գերաշնորհ Տէր ՓՈԹԸՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վսեմ. ՍԷԹ ԼՕ, մեծանուն նախագահն Քոլոմպիա Համալսարանին։

ՃՕՆ Ն. ԿՕՖ, հռչակաւոր և ազդեցիկ օրէնսգէտ։

Պատ. Տր. ՄԱՔ ԱՐԹԸՐ, քաղաքիս առաջնակարգ երիցանց մին։

Նաև մի պաշտօնական նամակ համակրանաց Պրուքլինի Ամէրիքըն Նէշընըլ Լիկ կոչուած ընկերութեան կողմանէ։

ՓՈԹԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԷՆՆ

Տիար Ս. Վ. Քոնսթանթ, ատենապետ,

Սիրելի Տէր իմ,

Մեծ ցաւ է ինձ որ անխուսափելի յանձնառութիւն մի անհնար պիտի գործէ ինձ ներկայ լինիլ յօգուտ Հայ ժողովրդեան տեղի ունենալու Միթինկին։ Երբ ի Կ. Պոլիս էի, ճիշդ տարի մի առաջ, նոցա առաջնորդաց շատերուն հետ հաղորդակցութիւն ունեցայ և սովորեցայ նոցա անձնական բնաւորութեան և բարձր ձգտմանց համար խորին յարգանք տածել։

Մեք այնքան հեռու ենք որ չենք կարող արդէն հայկական խժդժութեանց ամբողջ պատմութիւնն գիտցած լինիլ, բայց թէ խժդժութիւնք տեղի ունեցած են ի բռնաբարումն քաղաքակրթութեան առաջին օրինաց, և թէ անոնք մասն են կառավարական դրութեան մի որոյ աւանդութիւնք շարունակ վայրագ և անագորոյն եղած են, շատ տարակոյս չկայ։ Ի՞նչի կը ծառայէ որ աշխարհի բոլոր մասունք և ժողովուրդք իրարու հետ այսքան սերտ յարաբերութեան բերուած են, եթէ Հեթանոս իմաստասէր Տէրանսի «Մարդ եմ ես և ոչ ինչ որ Մարդկային է, օտար է ինձ» սկզբունքէն ալ ստորին մնալ պիտի զլիջանիմք։ Ոևէ ազդարարութիւն կրնայ իմասնորէն խորշիլ անպատեհ չափազանցութենէ, սակայն կը յուսամ թէ յանդիմանութիւնն բաւական սաստիկ կը լինի հասկացունելու համար թէ Նիու Եորքի ժողովուրդն միութիւն մէ ամենայն բողոքոյ մէջ ընդդէմ անիրաւութեանց որք բարբարիկ դարուց և վայրենի ցեղերու կը վայելեն։

Հաւատացէք զիս, Սիրելի Տէր իմ,

Ձերդ յոյժ հաւատարմօրէն

Հ. Ս. ՓՈԹԸՐ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՊԱՏ. ՊԼԻՍԻ

Ատենախօսն պատմեց թէ ինչ փորձառութիւններ ունեցած է ի Վան, Բաղէշ, Մուսուլ, և ինչքան երկչոտ ու վատ գիտէ զՔուրդս։ Նոքա զօրութեան առջև չուտով կը խոնարհին, բայց խնդիր է թէ ո՞վ պիտի ցուցնէ այդ զօրութիւն։ Թուրք կառավարութի՞ւնն։— Ոչ։ Դրսէն պիտի գայ ապահովութիւնն, և Միացեալ Նահանգք պարտաւոր է իւր անկողմնակալ և յարգելի ազդեցութիւնն ի գործ դնել յօգուտ այս արդար դատին։ (Ծափք)

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՒԳՈՍՏՈՍ ՃՕՆՍԸՆԻ

Միացեալ Նահանգաց Նախկին հիւպատոսն ի Սիւրիա, Վսեմ. Ճոնսըն երկարօրէն պատմեց Դամասկոսի կոտորածին պարագայքն և հետեւութիւնքն, իրրեւ ականատես վկայ, և բացատրեց Օսմ. կառավարութեան եղանակներն իւր հպատակ զանազան ցեղերն տկարացունելու։ Յունաստան և Պուլկարիա ազատ երկիր դարձած են հակառակ միջազգային դաշնադրոց։ Պէտք է Հայաստանի համար ևս պահանջուի հարկաւորն։ Պէտք է Հայաստանն դրուի ընդհանուր կառավարչի մի ներքև կամ լինի ինքնօրէն երկիր։ (Ծափք)

Ատենախօսութիւնք մինչև ցայսվայր պատմական հանգամանք ունէին և ժողովուրդն բաղդատաբար հանդարտ էր։ Բայց երբ Տր. Ճօն Հօլ խօսեցաւ, Նիու Եորքի մեծահամբաւ երէցն, և առաջարկութիւններ կարդաց, սրահն նոր ոգի առաւ և յաջորդ ատենախօսութիւնք՝ զինուորականներու կրակոտ շրթունքէն իբրև ահագին ռմբակոծութիւն արձակուելով ծեծեցին Բ. Դրան ու Պալատին սրմերն և ունկնդիրք ևս քան՝ զևս յանախ դղրդացուցին բովանդակ շէնքն երկարատեւ ծափահարութեամբք և կանչիւք։ Այդ որոտալիր մասն պէտք է նկարագրեմք յաջորդ թուով։ (Շարունակելի)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԵՒ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾՆ

Միացեալ Նահանգաց բազում քաղաքներուն մէջ եղան ու կը լինին հետզհետէ միթինկներ, ուր այս երկրին ժողովուրդն կը բացատրէ իւր արդար զայրոյթ թրքական բարբարոսութեան դէմ։ Նիու Եորքի մէջ Դեկտ. 18ի մեծ միթինկէն զատ եղան ուրիշ ժողովներ ևս, ինչպէս Տր. Մաք Արթըրի եկեղեցւոյնն և Տր. Սաթըրլիին։ Սէյնթ Պարթոլոմոյի եկեղեցւոյն նշանաւոր եպիսկոպոսական վարդապետն ԿՐԻՐ Դեկտ. 30ին ի յիշատակ հայ նահատակաց պիտի կատարէ հանդէս մի ուր ատենախօսութիւններ պիտի լի-

նին։ Պըֆալօ, Շիքակօ, Պոսթըն, Փէթէրսըն, Միրէքուս, Ցրէզնօ, Փրովիտէնս և այլ քաղաքաց մէջ եղած են նմանօրինակ միթինկներ, և որոշումներ քուէարկած են ու Վօշինկթըն յղուած։ Պոսթոնէն Տր. Պարրօղի գլխաւորութեամբ մի պատգամաւորութիւն, որոյ մասնակից էր նաև մեր յարգելի հայրենակիցն Կիւլէզեան, ներկայացան Պետական Քարտուղար Կրէշէմի, և կարեւոր ներկայացումներ արին։ Պետ. Քարտուղարն տեղի տալով հանրային կարծեաց հոսանքին՝ դարձեր է այժմ Հայոց կողմն

Ծերակուտին մէջ Տիար ՀՕՐ որոշում մի ներկայացոյց Դեկտ. 3ին, որ ընդունուեցաւ խնդրելով տեղեկութիւն հայկական կոտորածին նկատմամբ։ Տիար Պլանշառ եւս որոշում մի առաջարկեց որով կը բողոքէր այս բարբարոսութեանց դէմ և կ'ուզէր որ Կառավարութիւնն այս պատճառաւ յանդիմանէր զԹուրք կառավարութիւնն։ Ասոր վերայ կառավարութիւնն ներկայացոյց Ծերակուտին այս խնդրոյ վերաբերեալ բոլոր դիւանագիտական թղթակցութիւններն։

Կառավարութիւնն բաւական համարձակութեամբ միջամուխ եղած է Հայկական Խնդրոյն, ուզելով որ Տիար Ճիւէթ, ամերիկեան հիւպատոսն ի Սեբաստիա, ընկերանայ քննիչ Յանձնաժողովին և անկախ քննութիւն կատարելով՝ տեղեկագրէ իւր կառավարութեան։ Այսու Ամերիկա միացած չպիտի լինէր ուղղակի Յանձնաժողովին և Մեծ Տէրութեանց դաշնագրական յանձնառութեանց մասնակցած չի պիտի համարուէր, սակայն առիթ անտի սկսան քննադատել Նախագահին ընթացքըն իբրեւ հակառակ երկրին աւանդական քաղաքականութեան որ է չխառնուիլ Եւրոպիոյ միջազգային գործոց։ Ի վերայ այսըր ամենայնի Նախագահն հաստատ կը կենայ և կը պնդէ որ Ճիւէթի թոյլ տըրուի կատարել քննութիւն անպաշտօնական կերպով։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԷՐԱԼՏ ԹԵՐԹՆ

ՀԱՄԼԻՆ ԵՒ ԱԼԼԷՆ, ՍԻՒՆԻ ԵՒ «ՀԱՅՔ»

Ընթերցողք իրազեկ են այն դժբաղդ նամակին զոր նախկին միսիոնար Պատ. Համլին անցեալ տարի հրատարակած էր Պոսթընի «Քոնկրիկէշընէլիսթ»ին մէջ չարաչար թէպէտ խախուտ փաստերով հարուածելով զՀնչակեան Կուսակցութիւնն։ Թուրք կառավարութիւնն այժմ գործի արեր է այդ նամակ որով կը նկրտի Հայոց վերայ նետել կոտորածին պատասխանատուութիւնն։ Հէրալտ ամօթ չի համարեց երեք անգամ հրատարակել Թուրք գործիչ Մավրոյանիի և այլ պաշտօնէի ուրումն ստայօդ և անհեթեթ գըրութիւններն որ Համլինի նամակն հիմ առնլով՝ կը փորձէին մոլորցունել հանրային կարծիքն։

Պատ. Համլին Հէրալտի գրեց ու բացատրեց թէ Հնչակեանց մասին ինչ որ ինքն գրած էր, Հայոց փոքր մէկ մասին տըկար և անկարեւոր գործողութեանց մասին էր, որք արտառոց կերպով չափազանցուած էին Թրքաց կողմանէ, և թէ, զիարդ և իցէ այդ ամենն, Թրքաց այս խժդժական կոտորածն պէտք է անվերապահեալ կերպով դատապարտուի բոլոր աշխարհէ։

«Տիգրան Սիւնի» կեղծ անուան տակ կը գրէ մեր հայրենակիցներէն մին Հէրալտի մէջ։ Գրչի և խորհրդոյ հանգամանքներէն մեզ քաջ յայտնի է բուն անունն։ Մասնաւոր ուրախութիւն է մեզ իւր կարող և ճարտար գործակցութիւնն յօգուտ հայ դատին։ Կը շնորհաւորեմք զինքն և կը յուսամք պիտի շարունակէ գործել յարաճուն եռանդով։

Հէրալտ Դեկտ. 21ին հրատարակեց հետեւեալ նամակն ․ անճաղկոտր արած, բուն բողոքոյ խօսքերն մէջէն վերցուցած լինելով։

ՀԱՅ ԽՄԲԱԳԻՐ ՄԻ Կ'ԱՌԱՐԿԷ

Առ խմբագիրն ՀԷՐԱԼՏԻ.—

Անցեալ կիրակի ՀԷՐԱԼՏՆ հրատարակեց յօդուած մի ի գրչէն Տիար Թովմաս Կ. Ալէննի՝ Ասիական Թուրքիոյ Հայոց վերայ։ Արիւնած Հայաստանի դատին հարուած մ'էր այն։ Կը ներբողէր «Միւսիւլման կրօնին թոյլտու ոգին» և խստիւ կը դիմախօսէր հայկական պահանջմանց։

Յոյժ կը զարմանամ։ Արդեօք Հէրալտ կ'ուրանա՞յ իւր ազնիւ անկողմնակալութեան սկզբունքն։ Արդեօք ինքն անասելի Թրքին ջատագո՞վ հանդիսանալ կը ըսկսի, թէ իւր այս նոր կացքին համար մասնաւոր բացատրութիւն մի կայ։ Միթէ,

դիպուածով իմն, եկա՞ծ էք այն համոզման թէ Դուռն բարեոք կառավարեր է իւր քրիստոնեայ հպատակներն և Սասնոյ գաւառին լաւ խնամ տարեր է։ Արդեօք Օսմ. կառավարութիւնն ձեր համակրութեան արժանի՞ հանդիսացած կը լինի հազարաւոր անմեղ կիներ ու տղայներ մորթելովն։ Ինձ ցաւալի է մինչև իսկ այս հարցումներն ուղղել առ խմբագիրն Հէրալտի որ մինչև երկու շաբաթ առաջ անկողմնակալութեան համբաւ կը վայելէր։

Ուրախ պիտի լինէի, Տէր, լսել ձենէ, և շնորհակալ՝ եթէ վստահացուցնէիք զիս թէ անիրաւեալ Հայաստանն կրնայ դեռ ձեր անկողմնակալ աջակցութեան յուսալ իւր դատն ծանօթացուցնելու աշխարհի։ անձկանօք կը սպասեմ Ձեր պատասխանին։

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Նիւ Եորք Դեկտ. 20, 1894 Խմբագիր Հայքի

ԱՆԳԼԻՈՑ ԵՒ ՖՌԱՆՍԱՑԻ ՀԱՅՈՑ ԵՌԱՆԴՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆ

Նոյ. 27ին Անգլեհայկական ընկերակցութիւնն ժողով մ'ունեցաւ ի Լոնտոն, որուն ներկայ էր մեր ընթերցողաց ծանօթ Փրոֆ. Ակար Պիթ Հայասէրն ևս։ Համակրական նամակներ և հեռագիրներ կարդացուեցան, յորոց համարի էին Բէնը Մաքքօլի և Տիար Ց. Իսկէնտէրի— Բարիզի Հայոց Հայրենասիրական Ընկերակցութեան Նախագահի— նամակներն։ Տիար Իսկէնտէր կը ծանուցանէր թէ Ֆռանսացի Հայերն աղերսագիր մի մատուցած էին Ֆռանսական կառավարութեան Նոյ. 12ին, յիշեցուցնելով 61րդ յօդուածի տրամադրութիւնն և խնդրելով միջազգային միջամտութիւն Հայաստանի համար։ Տր. Գալանթարեանց ևս այլ և այլ կարեւոր տեղեկութիւններ հաղորդեց վերջին արհաւրաց վերաբերութեամբ։ Նախագահ Սթիվընսը, Փրոֆ. Պիթ, Տիարք Ցակոբեան, Ներսէսեան և Աղանուր ևս ասենախօսեցին և որոշումներ քուէարկուեցան։

Դեկտ. 17ին, ի Լոնտոն, մեծ մասնաժինկ մի տեղի ունեցած է, ջանիւք Անգլեհայկական Ընկերակցութեան, ուր կարեւոր անձնաւորութիւնք ասեն ախօսեր են ու առաջարկութիւնք քուէարկեր։

Մեծ Մերուն ալ համակրական նամակ մի յղած էր, չկրնալով ներկայ գտնուիլ միթինկին։ Մերայինք շատ կ'աշխատին համոզելու ղՏիար Կլատսթոն որ Հայոց ի նպաստ ևս Մանիֆէսթոյ մի հրատարակէ հանգոյն այնմ զոր հռչակեց Պուլկարական կոտորածին առթիւ։

Տեարք Թումայեան և Ձերազ ևս կը աշխատին եռանդագին, կը գրեն թերթերուն մէջ և կը խօսին ի ժողովս։

Ամէն երկրի մէջ Հայեր այնպիսի անխոնջ գործունէութիւն կը ցուցնեն և այնպիսի անձնուիրութիւն որ ճգնաժամին ահաւորութեան կը հաւասարի և ազգին ապագային նկատմամբ նոր յոյս կը ներշնչէ դիտողին։ Ամերիկայի մէջ Հայեր կան որք իրենց բոլոր վաստակն կը զոհեն այժմ, հաղիւ չոր հաց պահելով իրենց համար։

Սրտի խորին յուզմամբ և ոքանչանօք կը շնորհաւորեմք մեր բոլոր ազգայինքն ամենայն գաղթականութեանց՝ իրենց այս ազնիւ ինքնամոռացութեան համար յաղաւութիւն թշուառ Հայրենեաց։

ՎՆԱՍԱԿԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Հայեր կան որ մեր դատին վնասելու բնութիւն ունեցող տեղեկութիւններ և սխալ լուրեր կը հաղորդեն լրագրաց տեղեկաբերներուն։ Այս օրերս մանաւանդ երբ լրագիրք իրողութիւններ կ'ուզեն ձեռք բերել և հրատարակել Հայոց մասին, մեր երիտասարդներէն ոմանք շատախօսել են սկսեր՝ կարծելով օգնելգործին։ Դեկտ. 21ի Նիւ Եորք Ուբրլտի մէջ կարդացինք Հարթ Ֆըրցի ազգայնոյ մի կողմանէ հաղորդուած տեղեկութիւնն թէ Տիար Տիգրան Թէրզեան Թրոյէն վերադարձած է Հայաստան և հոն երկաթեղէն գործիներու գործարան բացած է, որոյ համար թուրք կառավարութիւնն «նետեր է գինք ի բանտ, ուր տակաւին կը մնայ։»

Տիար Թէրզեան Տաճկաստանի մէջ ի բանտի չէ, որպէս տեղեկատուն ասեր է, այլ այս երկրի մէջ է, Թրոյ, և մեք զինք դանձամբ տեսանք անցեալ ամառ։

Այս մէկ օրինակն թող հերիք համարուի։ Այսպիսի սխալ տեղեկութիւնք կրնան թշնամւոյն կողմէն գործածուիլ ի վնաս մեր դատին և մեր պաշտպանքն հակառակորդք այսպիսի մի քանի օրինակ ի մի յօդուած կազմել և ասել թէ ահա այսպիսի սուտ կամ սխալ տեղեկութիւններ են որ Հայ յուզիչներն կը հանեն շրջաբերութեան, և այսպէսով կարող են անվստահելի անել Հայ ազգիւրներէ եկող բոլոր լուրերն։

ՖՐԷԶՆՈՅԻ ՀԱՅԵՐՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ

Ֆրէզնոյ, 10 Դեկտ. 1894

... Մասնախումբս ամեն բանէ առաջ զբաղեցաւ «Մաս-Միթինկի» կարգադրութեամբն և հրաւիրեց տեղւոյս նշանաւոր քարոզիչներն որ բարեհաճին իւրեանց նախաձեռնութեամբ գումարել զայն և յանձն առնուն խօսիլ այն Միթինկին մէջ. ամենքն ալ սիրայօժար ընդունեցին, և որոշուեցաւ նոյ. 25ի կիւրակէ երեկոյին գումարուիլ տեղւոյս ամենամեծ եկեղեցւոյն մէջ։

Կարեւոր կարգադրութիւններն եղան և նշանակեալ օրն ահագին բազմութիւն լեցուեցաւ նոյն եկեղեցին, որոյ ճակատն ու չղարշներով պատած և Ս. Գրքէն պատշաճ վերտառութիւններ գրուած էին, նոյնպէս գրուած էր աճապարանօք չինուած մի պատկեր որ այդ կոտորածի մանրանկարն էր և որոյ տպաւորութիւնն բաւական ազդեցիկ եղաւ։ Ժողովը բացուեցաւ աղօթքով, Ս. Գրքի ընթերցմամբ և տըխուր երգով սի որուն ձայնակից եղաւ ամբողջ ժողովուրդն։ Ապա սկսան ատենախօսութիւնք. առաջին ատենախօսն եղաւ Հայ մի որ պատմեց կառավարական դեղծումներն, բարբարոսութիւններն և հալածանքներն որք ի գործ կը դրուին Հայերու վրայ։ Յետոյ կարդաւ բեմն ելան ամերիկեան քարոզիչներն, որոց մին համառօտիւ պարզեց Հայոց ծագումն, պատմութիւնն, և ինչ ինչ նշանաւոր անցքերն. Ուրիշ մի ծանօթացուց թէ Հայ Ազգն որ թուականին ընդունած է քրիստոնէութիւնը, թէ ո՞րչափ հալածուած ու արիւն թափած է իւր կրօնին համար և թէ որչափ ծառայութիւններ մատուցած քաղաքակրթեալ ազգաց և տակաւին մատուցանելու կարող։ Մի այլոմն նկարագրեց Հայոց ներկայ սոսկալի վիճակն ի Թուրքիա, ինչպէս նաև այս վերջին կոտորածոց մի ահաւոր հաշիւը տուաւ, միանգամայն հարուածեց այն ամեն քաղաքակիրթ ազգերն որք կը լսեն, կը տեսնեն այդ ամենն ու անտարբեր կը մնան։ Այս իմաստիւ ուրիշ մի քանի ատենախօսութիւններէ ետք յայտարարուեցաւ թէ միայն վշտակցիլն ու արդահատիլն արդիւնք մի յառաջ չեն բերեր և եզրակացուցին թէ յանուն քրիստոնէութեան և յանուն մարդկութեան պէտք գործնական ջանք մի ընել, և առաջարկեցին որ բողոքագիր մի ուղղուի առ Նախագահն Միացեալ Նահանգաց և պահանջուի որ այս ամեն ահռելի բարբարոսութեանց վերջ տրուելու համար, միջամտէ ուր որ անկ է. ամբողջ ժողովուրդն ոտքի կանգնելով յայտնեց իւր հաւանութիւնն այն գրուածքին որ պիտի յղուէր առ Նախագահն։

Այդ ժողովէն վերջ մասնախումբս զբաղած է հաւաքելու Ամերիկացի ժողովրդեան ստորագրութիւնքն որոց թիւն բաւական ստուար եղած է և 1—2 օրէն կը ղրկեմք ի Վաշինկթըն։ Ցիրաւի քաջ գիտեմք թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն անմիջական արդիւնք մի յառաջ բերելու անզօր է, բայց բաւական քաջալերիչ ու մխիթարական է այսպիսի մի մեծ ժողովրդեան ուշադրութիւնը ու համակրանքը առ մեզ դարձուցանել. առ այժմ ատկէ աւելին չեմք կարող ակնկալել։

Նաև մասնախումբս դիմեց խնդրագրով մի՝ տեղւոյս Հայոց կողմանէ, առ Բէնթըրպըրի Արք-Եպիսկոպոսն, հայցելով իւր բարձր ազդեցութիւնն ու միջամտութիւնն. նոյն նպատակով դիմեց նաև Ամերիկեան Խաղաղասիրաց Դաշնակցութեան.

Ահաւասիկ Մեծ-Տէր, մեր ձեռք առած միջոցներն որք չի գիտեմք մեր թշուառ հայրենակցաց վիճակն բարելաւելու արդիւնք մի յառաջ պիտի բե՞րեն թէ ոչ։ Միայն սա ստոյգ է թէ ինչ որ օգտակար համարեցանք զայն ի գործ դրինք։ Եթէ կան ուրիշ լաւագոյն եղանակներ որք աւելի արդիւնաւոր կրնան լինիլ, մեր բոլոր զօրութեամբն պատրաստ եմք մասնակցելու և կը սպասեմք զայն լսել Ձեզմէ որ երկար տարիներու փորձառութեամբ կարող էք լաւագոյն խորհրդատու մի լինիլ մեզ։

Այս առթիւ ներեցէք մեզ դիտել թէ ներկայ ահաւոր կոտորածն անգամ մի ևս հաստատեց թէ, ո՞րչափ կարեւոր է մեզ կեդրոն մի ունենալ օտար երկրի մէջ։ Երբ այդ գոյժն առինք ամենքս ալ շուարած՝ անգլուխ հօտի պէս՝ չի գիտէինք ի՞նչ ընելիս կամ որո՞ւ դիմելիս։ Կը զգայինք թէ միահամուռ մի ձեռնարկ ամենէն օգտակարն էր, բայց ինչպէս գիտնալ թէ ինչ կ'ընեն այսինչ տեղի Հայերն և կամ ինչ այնինչ տեղ եղողներն, իրաքանչիւրին դիմել թէ երկար ժամանակի կարօտ

և թէ ապարդիւն իսկ էր, որովհետեւ հաւանականաբար ամեն տեղէ զանազան խորհուրդներ ու դաղափարներ պիտի յայտնուէին, որք երկար վիճաբանութեանց դուռ բանալէ դատ արդիւնք մի չպիտի արտադրէին. մինչդեռ օրինաւորապէս կազմուած մի կեդրոն կարող պիտի լինէր ուղղել ու առաջնորդել կամ ի դիմաց բոլոր հայ դաղթականներու դիմումներ ընել։

Արդ, Մեծ. Տէր, դուք որ այնչափ ազդեցիկ և փորձառու էք, լաւագոյն չլինի՞ որ ընտրեալ անձերէ կեդրոն մի կազմելու ջանք ընէք որ առաջնորդէ ընդհանուր հայ դաղթականութիւնն և նորա ներկայացուցիչը լինի եւրոպական տէրութեանց առջեւ։ Մեք մեր բաժնին ինկած դրամական օգնութիւնն ընելու պատրաստ եմք, բաւական է որ կազմուի այնպիսի մի կեդրոն որ ընդհանուր հայ դաղթականութեան մեծագոյն մասին համարմանն ու վստահութեանն արժանի լինի։ Այդպիսի մի կեդրոն էական ու անհրաժեշտ կը կարծեմք և կը խնդրեմք որ լուրջ խորհրդածութեան առարկայ ընելով, Ձեր կարծիքն մեզ հաղորդել բարեհաճիք։

Մասնախումբս պարբերաբար պիտի իմացունէ ձեզ իւր կատարած գործերն և կը խնդրէ որ դուք ալ Նիւ Եորքի և շրջակայ Հայերու շարժմանց ու գործունէութեան մասին տեղեկութիւններ տալ հաճիք։

Մնամք յարգանօք

Ֆրէզնոյի Հայ Գաղթականաց Մասնախումբ

Ատենապետ	Ատենադպիր
Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ	Յ. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ՈՒՈՒՆՍՕՔԷԹԷ

Դեկտ. 6, 1894, Ուունսօքէթ

Յարգոյ խմբագիր,

Սասնոյ այս վերջին աղէտալի դէպքն բոլոր Հայոց սիրտն կարեվէր խոցեց։ Քաղաքիս Հայ պանդուխտներն թէ և թուով քիչ, անցեալ հինգշաբթի (Նոյ. 29) ի յիշատակ նահատակելոց սգոյ հանդէս կատարեցինք և պտոյտ մ'ունեցանք նոյն աւուր կէս օրէն վերջ ժամը 3ին, որուն մասնակցեցան վաթսունի չափ Հայեր, ճերմակ ձեռնոցներով և ի նշան սգոյ ձախ թեւերուն վերայ սեւ լաչակ կրելով։ Առջեւէն երկու փոլիս կը քայլէր, անոնց ետեւէն երկու թմբկահարք. հին ամերիկեան ճաշակաւ զգեստաւորեալ, որք յուղարկաւորական եղանակ կը հարկանէին։ Յետ նոցա Միացեալ Նահանգաց դրօշակն կը քաշուէր, որոյ կը հետեւէինք Ազգայիններս զոյգ զոյգ, քաղաքիս ամբողջ Մէյն փողոցը շրջելէ վերջ եկան օր առաջ տեղոյս թերթերուն մէջ յայտարարուած ժողովարանը, ուր խմբուած կային այլ հարիւրի չափ Հայեր և երեսունի չափ Ամերիկացի հրաւիրեալներ։ Ժողովն սկսաւ Հիմնէ՞ էլ լռենք երգով, յետոյ քանի մի հայերէն ատենաբանութիւնք եղան։ Յետոյ խօսք առաւ Տիար Ա. Սարկաւագեան, քարոզիչ Փրովիտէնսի Հայ բողոքականաց, ու խօսեցաւ անգլիերէն լեզուաւ։ Յետոյ հրաւիրեալներէն քաղաքիս Եպիսկոպոսականաց երէցն խօսեցաւ։

Ապա Տալորիկի երգն երգեց Պ. Մ. Ս. եան, ու լռեց ամպերը երգեց Ա. Սարկաւագեան։ Ասոնք պարտ անձին կը համարիմ ասել թէ, որպէս ամէն կողմ, այնպէս ալ հոս ոևէ կուսակցական ոգին ի բաց թողած՝ Հայեր միաբան կատարեցին սոյն սրգոյ հանդէսն։

ՍԻՐԱԿԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Որոշուած լինելով որ Ուսաբրի մէջ Ամերիկայի Հայ Գաղթականութեանց ներկայացուցիչներով համաժողով մի լինի, հրաւէր ուղղուած էր նաև Նիւ Եորքի հասարակութեան։ Հրաւէրն ներկայացուած է Հայկ. Միութեան Սովորական մէկ նիստէն վերջ, և ներկայք քուէարկութեամբ ընտրած են երկու պատուիրակ։

Հնչակեանք իրենց ժողովի մէջ ան աւեր հռչակելով վերոյիշեալ ընտրութիւնն, ընդհանուր ժողովկոչեր են ընտրութեան համար։ Ներկայից մէկուն կողմէն դիտողութիւն եղած է թէ քանի որ խնդրոյն բնութիւնն բացատրող ընդհանուր հրաւէր յղուած չէ հասարակութեան, այս երկրորդ ժողովն ալ Նիւ Եորքի հասարակութեան անունով ընտրութիւն անելու օրինական իրաւունք չունի, ուստի լաւ կ'անէ որ միայն բողոքէ անոնց դէմ որ առանց ընդհանուր հրաւէրի կատարել տուած են ընտրութիւնն։ Այս

խրատ չէ յարգուած ժողովին կողմէն և երկու պատուիրակ քուէարկութեամբ ընտրուած են։ Կը վախցուի թէ այս անցքերու հետեւանօք անպատեհ միջադէպներ ծագին Ուստըրի համաժողովին մէջ։

ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ

ՅՈՒՍՏԸՐ

Դեկտ. 25ին եղաւ հոս Ամերիկայի Հայ Գաղթականութեանց համաժողովը։ Նիւ Եորքէն պատուիրակ եկան Տր. Այվազեան և Տիար Տիոնեան, որոց ետևէն չնչապատահասան ուրիշ երկու հոգիք ալ, որք Նիւ Եորքի Հնչակեանց ջանքով ընտրուած երկու Հնչակեաններ էին։ Քաղաքիս վարդապետն ու քարոզիչն պատգամաւորներ հըրաւիրած էին առանց որոշ ծրագրի, և երկար վէճերէ ու խորհրդածութիւններէ ետքը որոշուեցաւ Միացեալ Նահանգաց բոլոր գաղթականութեանց կողմէն աղերսագիր մատուցանել պէրլինի դաշնագիրն ստորագրող տէրութեանց և վերստին պատմելով Հայոց ցաւերն, խնդրել իբրև դարման ինքնօրէն վարչութիւն Հայաստանի։ Աղերսագրին խմբագրութիւնն յանձնուեցաւ Նիւ Եորքի պատգամաւորաց։ Ըստ իս չէր արժէր պատգամաւորներ հրաւիրել յՈւստր մի այդպիսի գործի համար։

Հետեւեալ գաղթականներն ներկայացուած էին Պատուիրակներով.—

Նաշուաէն՝ Տ. Պոյաճեան, Հուաթինվիլէն՝ Տ. Ֆրէնկեան, Ֆօլ Րիվըրէն՝ Տ. Նանոյեան, Լօէլէն՝ Տ. Յովհանէսեան, Լօրէնսէն՝ Տեարք Կարապետեան և Ահարոնեան, Հորթֆըրթէն՝ Տ. Գրիգորեան, Պրիճփորթէն՝ Տ. Մանառէյեան, Փրովիտէնսէն Տ. Սիւնի և Տ. Սամուր, Նիւ Պրիթընէն՝ Տեարք Քիւբէլեան և Պաղտասարեան, Թրոյէն՝ Տ. Սորգիսեան, Նիւ Եորքէն Տր. Այվազեան, Տեարք Տիոնեան, Շիրվանեան և Վահէ, Լինէն՝ Տեարք Աճուրեան և Լեւոնեան, Ֆիլատէլֆիայէն՝ Պատ. Տր. Գաբրիէլեան, Ֆիլատէլֆիացի։

Շիքակոյէն և այլ հեռաւոր գաղթականութիւններէ ցաւ յայտնած էին որ չէին կարող ներկայ լինիլ։

Ժողովոյն նախագահն էր Հայր Տէրունեան, ատենապետ՝ Պատ. Բէյմալեան, քարտուղար՝ Տ. Ծերոնեան։

ԺՈՂՈՎԱԿԱՆ ՈՄՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Սուլթանն անձնամատն եղաւ Եւրոպոյ՝ չքանչան յղելով այն զինուորական պաշտօնէին որոյ հրամանատարութեամբ ահաւոր կոտորածն գործած էին Թուրք և Քուրդ զօրքն։ Միւս կողմանէ Թուրք կառավարութիւն մեծ անձկութիւն կը կերպարանէ եղելութիւններն ստուգելու, և մինչև իսկ հեռագրուեցաւ թէ Համիտ յոգնած սպառած է մտատանջութենէն։ Տարակոյս չկայ, թերթից ոմանց ընթացքէն, թէ Փատիշահն այս միջոցիս շատ ոսկի կը վատնէ։

Համիտի սրտի նեղութիւն պատճառող բան մ'ալ այն է որ Իմթիազի չքանչանն նմին վեհափառութեան Վիքթորիա Թագուհւոյն յատուկ պատգամաւորութեամբ մի յղելու առաջարկութիւնն մերժուեր է Անգլիական կառավարութեան կողմանէ։

Բաց այտի, Ռուսիոյ Նորապսակ Զարն ալ բաւական ցուրտ կերպով պատասխաներ է Համիտի շնորհաւորական հեռագրին։

Սուլթանին առաջին քարտուղար Սուրէյա փաշա յանկարծամահ է եղեր։

—Դեկտ. 25ին կը հեռագրեն Կ. Պոլսէ.—

Շէֆիք Պէյ, վճռաբեկ ատենի դատաւոր, և Ճէլալէտին Պէյ, իբրև հայկական խժդժութեանց քննիչ Յանձնաժողովոյ անդամք, մեկնեցան այսօր Կ. Պոլսէն դէպ ի Կարին։ Նոցա հետ գնաց Փռանսական պատուիրակն Տիար Վիլպէռ։

Միացեալ Նահանգաց դեսպան Թէրէլ կիրակի երեկոյ տեսակցութիւն մ'ունեցաւ մեծ եպարքոսին հետ վերաբերութեամբ Ամերիկացի անկախ պատուիրակի մի առաքման ի Սասուն։ Երկուշաբթի Սուլթանըն դրականապէս մերժեց Տիար Ճիւէթի թոյլ տալ որ քննիչ Յանձնաժողովին ընկերանայ։ Այսու Միացեալ Նահանգաց մասնակցութիւնն ընդ խնդրով քննութեանց հաւանականօրէն պիտի խափանուի։

—Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարար Քիմպըրլի՝ քաղաքական ճառ մի արտասանելու ատեն ի Լոնտոն՝ նախ և յառաջ Հայկական Խնդրոյն վերայ խօսեր է։

—Լ. Թայմզ լրագիրն Լոնտոնի Հայկական Մաս-միթինկին արարքն կը տեղեկա-

րէ, և խմբագրականով մի կը քննադատէ Անգլեհայկական ընկերութեան կողմէ այն յայտարարութիւնն թէ Սասնոյ կոտորածին նկատմամբ Թրքական Ցանձնաժողովոյ կողմէն ճշմարիտ տեղեկագիր սպասել ի զուր է։ Թօյմզ չափազանցութիւն կը համարի այսպէս ասել այժմէն քանի որ Ռուսական, Անգլիական, Ֆռանսական և Թերևս Իտալական պատուիրակներ պիտի հսկեն Ցանձնաժողովոյն քննութեանց։ Քէնըն Մաքքօլ յատուկ նամակաւ կը պնդէ նոյն թերթի մէջ թէ միւսիւլման կառավարիչ մի Սուլթանին ուղղակի իշխանութեան ներքև չի կրնար քրիստոնեայ ժողովուրդ արդարութեամբ կառավարել վասն զի Մահմետական օրէնքին պահանջմանց դէմ է քրիստոնէի վկայութեան ընդունելին են. որք հարկաւոր բարեկարգութեանց կարգին պէտք է պատկանին։

—Հեռագիր մի կը ծանուցանէ թէ Վեհ. Խրիմեան Հայրիկ պիտի ներկայ գտնուի, Ռուսիոյ թոյլտուութեամբ, Հայոց համաժողովի մի ի Տփղիս։ Այնպէս հասկցուած է թէ Նորին Սրբութիւնն պատգամաւորութիւն մի պիտի կազմակերպէ երթալ Զարին ներկայացունելու Հայաստանի կացութիւնն։

—Հայկական Խնդրոյն վերաբերութեամբ Զարին ուղղեալ մի յիշատակագիր, որ ի Պոսթոն պատրաստուած էր, Նիւ Եորքի մէջ ևս բազմաթիւ ստորագրողներ ունեցաւ ի Հայոց և յԱմերիկացւոց։

—Դեկտ. 25ին Ուօշինկթընէն կը հեռագրեն հետեւեալն.—

Այժմ յայտնի եղաւ թէ ինչ էր վարչութեան նպատակն երբ հրամայեց որ Մարպլհէտ մարտանաւն եւրոպական կայանն երթայ։ Այդ նաւ Թրքական ծովեզերքին վերայ ծառայելու պիտի յատկանայ, և իւր թեթևաշարժ գնացքովն մասնաւոր արժէք պիտի ունենայ հոն։ Թուրքիա եւրոպեան կայանին սահմանին մէջ կիյնայ և ի ծառայութեան գտնուող նաւ մի նոյն կայանին գլխաւոր հրամանատարին ներքև պիտի լինի։ Քարտուղար Հէրպէրթ իմացուցած էր Արտաքին Գործոց Նախարարութեան թէ Րիր ծովապետ Քիրլէնտի հրաման տուած էր ամեն կերպով օգնել Տիար Միլօ Ճիւէթի, զոր կառավարութիւնն նշանակած էր իբրև քննիչ Հայկական խժդժութեանց։ Այս հրաման եղած էր մի քանի օր առաջ, Մարպլհէտն եւրոպեան ջրերն յղելու որոշման հանդուելէն անմիջապէս յետոյ։ Ոչ Շիքակոյ և ոչ Սան Ֆռանսիսքոյ կրնային յղուիլ Տարտանէլըն ի վեր, ասոնց մեծութիւնն ունեցող մարտանաւերու մուտքն 1855ի դաշնագրով արգիլուած լինելով։

—Ն. Ե. Թրիպիուն կ'ասէ Դեկտ. 27 թուովն.— Դիտելի է թէ Հայաստանի մէջ գործերն յոռէ ի յոռեգոյն կ'երթան, և թէ առանց բուռն միջամտութեան գոհացուցիչ լուծում տալու հաւանականութիւնն կը նուազի։ Նշանակիչ յայտարարութիւն եղած է թէ Ապտուլլահ փաշա ետ կանչուած է և Շէյֆիք Պէյ և Ճէլալէտտին Պէյ նշանակուած են իւր տեղ, ի գլուխ Դրան Հայկական Ցանձնաժողովին։ Ասոր նշանակութիւնն կրնայ հասկցուիլ եթէ յիշեմք թէ այս երկու Պէյերն են այն դատաւորք որք հինգ տարի առաջ մարդախոշոշներու իշխան Մուսա Պէյին երեսն ճերմկցունող գայթակղալից դատաստանին ուղղութիւնն տուին։

—Նիւ Եորքի Սընտի Աւր անուն ամսաթերթին Նոյ. թուոյն մէջ Բարձ. Իշխան Լուսինեանի կենսագրութիւնն հրատարակուած է հանդերձ պատկերովն։

—Ամերիկացուհի մի կը գրէ մեզ.—

Շարունակեցէք գրչի պայքարն մինչև որ բոլոր ազգերն զարթուցանէք այս արհաւրաց բնութիւնն հասկնալու։ Անկեղծօրէն կը ցաւիմ որ Միացեալ Նահանգաց միջազգային քաղաքականութիւնն աւելի ճշմարիտ և ամուր չէ քան զոր էն։ Իւր քաղաքականութիւնն կը թուի լինիլ to keep out of trouble instead of HELPING out of trouble.

—Շիքակոյէն կը գրեն մեզ.—

Քաղաքիս մէջ ալ կազմուեցաւ մի Ազգային Միութիւն որոյ նախագահն է Տիար Թ. Խնկեան։

—Մէրիտընէն կը գրեն մեզ.—

Դեկտ. 23ին հոս ալ եղաւ միթինկ մը Հայոց վերայ կատարուած Թրքական խժդժութեանց դէմ բողոքելու։ Նիւ Եորքէն ներկայ էր Տր. Այվազեան որ և ուրիշ չորս կամ հինգ անձինք ատենախօսեցին — երեք երիցունք և դպրոցի մը վերատեսուչն մեծ զայրութիւ և ոգեւորութեամբ խօսեցան Թուրք բարբարոսու-

թեան դէմ ։ Համլինի հին Նամակն անդարմանելի փնաս տուեր է, Տր. Այվազեան ջանաց հերքել անոր Նամակին տպաւորութիւնները ։

ՄԻՆ Ի ՆԵՐԿԱՅԻՑ

—Լուր կայ թէ Եէմէնի Արաբք նորէն ապստամբեր են ։ Ապստամբողաց գլուխն Մուհէմմէտի ճշմարիտ յաջորդ հռչակեր է ինքզինք և գլխաւոր իմամներու ոմանց կողմանէ իբրեւ այնպիսի ճանչուեր է ։

—ՀԱՅՔի ծառայութիւններն գնահատող գովասանական և շնորհաւորող շատ Նամակներ հասան մեզ այս վերջերս, զորս հրատարակելու տեղի չիք ։ Հրապարակաւ կը մատուցանեմք մեր շնորհակալութիւնն ամենայն համակրողաց անցեալ աջակցութեան համար և կը խնդրեմք որ զնոյնն հաճին շարունակել և այսուհետև ։

Մեր բարեկամք գիտեն թէ ցաւ դժուարութեանց դէմ անդադար մաքառելով կրցանք շարունակել ՀԱՅՔն, և յայսմ հետէ ալ նոյնպէս պիտի լինի ։ Հեշտ գործ չէ մեր մէջ լուրջ թերթ պահել ։ Միայն կը խնդրեմք որ աջակցութիւնք աւելի մեթոտով լինին և ճիշդ այս երկու շաբաթներուս մէջ ամեն կարելի ճիգ թափուի բաժանորդաց աւելի ստուար թիւ մ'ունենալու ։

Ամեն գործ յաջողութեան համար իւր պատեհ ժամանակ ունի, յորում եթէ բոլոր ուժով չաշխատիմք, ի վերջոյ ձեռք առնուած միջոցներն ի զուր կը յոգնեցունեն զմեզ ։

ՀԱՅՔի ներկայ թիւն որ 8 երեսէ պիտի բաղկանար եղաւ 16 երես, նիւթոց առատութեան և ժամանակի անձկութեան բերմամբ ։

Յաջորդ թիւն պիտի հրատարակուի Յունուար 15ին ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլիս, Դեկտ 27 — Նախարարաց խորհուրդն համաձայնութեան եկաւ, երկուշաբթի օրն, կ'ասեն, ի մասին կարեւոր բարեկարգութեանց ի Հայաստան ։

Տրապիզոն Դեկտ. 27 — Հայաստանի մէջ թրքական պահապան զօրքերն կը շատցուին ։

Վիէննա Դեկտ. 28. — Կ. Պոլսէն հեռագիր մի կ'ասէ թէ Նախարարաց խորհուրդն իւր վերջին նստին մէջ բարեկարգութեան նոր յայտագիր մի ծրագրեց Կարնոյ, Վանայ, Բաղիշոյ և Մշոյ վարչութեան համար ։ Ըստ այսմ ծրագրի այդ չորս գաւառներն ի մի նահանգ պիտի վերածուին զոր մուսուլման կառավարիչ մի, Սուլթանէն անուանեալ պիտի կառավարէ 5 տարի ։ Հեծեալ ոստիկանութիւնն տեղական ժողովուրդէն պիտի կազմուի և Սուլթանէն կարգեալ զօրավարի մի հրամանատարութեան ներքև պիտի դրուի ։ Տեղական եկամուտն Նահանգին մէջ պիտի գործածուի բաց ի մէկ տարեկան տուրքէ առ Բ. Դուռն ։ Հանրային կրթութեան և շինութեան տեղական նախարարութիւններ եւս հաւանօրէն պիտի լինին ։

Ո՞վ կը հաւատայ այսպիսի բարեկարգութեան ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կմ 2ու կէս ֆրանք ։

ՀԱՅՑ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, Նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեց Մ. Ս. Գաբրիէլեան ։ Գին 20 սէնթ կմ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն ։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգյին ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հայրատահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն ։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք ։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի ։ 189 , գին 10 սէնթ կամ 50 սանթիմ ։

Մ. Ս. Թ. ՆԱՀԻԳԵԱՆ

ՈՒՍԹԸՐ ՄԱՍ.

Ամերիկայի մէջ 12 տարուան երկար փոռճառութիւն ունենալով ամենայն դիւրութիւն կ'ընծայեմք մեր Հայրենակցացը փոխանակագիր տալու մասին, Թուրքիոյ այլ և այլ կողմերը և Եւրոպիոյ բոլոր դլխաւոր քաղաքաց մէջ։ Մեր փոխանակագրերու ապահովութեան մասին հայրենակիցք արդէն տեղեակ են անցեալ 12 տարուան մեր ընթացքէն։ Նաև նաւու թիքէթ կուտամք ասկէ Եւրոպա կամ Թուրքիա երթալու գոհացուցիչ գներով։ Ա և է գծով, և մասնաւորապէս կը յանձնարարեմք American Line (Ամերիքըն Լայն) կոչուած գիծն, որ կը պարունակէ ՍԻԹի ՕՎ ՓԱՐԻԶ և ՍԻԹի ՕՎ ՆԻՈՒ ԵՈՐՔ կոչուած ամենապատուական և ամենաարագ նաւերը, որ ամեն չորեքշաբթի ժամ 11ին ճամբայ կելնեն Նիու Եորքէն։

Աստուածաշունչ (աշխարհաբար) այլև այլ մեծութեամբ և Աւետարան, և այլ կրօնական գրեանք կը վաճառեմք գրեթէ Կ. Պոլսոյ մէջ ծախուած գներովը, նաև գիտական և պատմական ոևէ գիրք կրնամք շատ կարճ ժամանակի մէջ բերել տալ եթէ հրաման ընդունիմք։

Ամեն նամակներու մեր անմիջական ուշադրութիւնը կուտամք ինչպէս սովորութիւն է։ Մեր հասցէն— M. S. T. NAHIGIAN

P. O. B. 478, Worcester, Mass.

Ահա գերձակ մի որ ամեն տեսակ զգեստուց պատուականն կը շինէ խիստ չափաւոր գնով, ինչպէս որ մեր Հայերէն ոմանք փորձով տեսած և զարմացած են։ Նիւթերն ընտիր են և ձևերն վայելուչ։ Փորձեցէք և տեսէք

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ
«ՀԱՅՔ»-ի
1894
ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ

Հայոց իշխանութեան վերահաստատութիւնն 1894ին 2
Եօզղատի դէպքն 6
Իրաց ճշգրիտ վիճակն ի Հայաստան 7
Արտաքին քաղաքականութիւն Հայոց— Անգլիա, Ռուսիա և Հայաստան 18
Միացեալ Նահանգք և Հայաստան 53
Հայ կինն Ազգային վերածնութեան գործոյն մէջ 23, 34
Ազգային Դաւանանք «Հայքի» 66, 82
Դաս մի Արմէնիայի խմբագրին 98
Հնչակեան կուսակցութիւն 102
Գործելու սկզբունք 114
Կարեւոր Ցայտնութիւն Եօզղատի վերջին դէպքերուն նկատմամբ 116
Խելօք և անխելք մարդիկ 132
Պահպանողական, ազատական և արմատական կուսակցութիւնք և եկեղեցի 146
Մերձ է փախճանն Թրքաց Պետութեան 162
Փրկութի՞ւն թէ կորուստ 178
Անգլիացին Լինչ Հայկական Խնդրոյն վերայ 194
Կեդրոնի խնդիրն, Լոռմէնի, Արա և Արմէնիա 210
Թո՞ւրք թէ քրիստոնեայ կառավարիչ պէտք է Հայաստանի 212
Թէ ի՞նչպիսի բարեկարգութեան կարօտ է Հայ եկեղեցին 214
Մեծ կոտորած Հայոց 225
Հայաստանի վտանգն 227
Միութեան Հիմունքն 228
Ի՞նչ անել Պէտք է 229
Ցետ արհաւրաց Ցուսոյ նշոյլ 233
Պարտ է յարատեւել 234

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Ընդ Ռուսահայաստան—Տիկին Շանթռլի 69
Հայկական Խնդիրն—(Լինչի ուսումնասիրութիւնն) 150, 171, 194
Պայիկ և Թոռնիկ 165
Սուգարանական բառարան Հ. Հիւնքեարպէյէնտեանի 182
Պատկեր աշխարհիկ դրականութեան Արեւմտեան Հայոց 220

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Վարդան Մամիկոնեան 75

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Մաղ 138

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Գործաւորաց վիճակն 124

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԽՆԴԻՐՔ

Քաղաքավարութեան կերպեր այցելութեան և տեսակցութեան առեն 13, 61
Ամերիկայի Հայոց մէջ եռացումն 27
Ո՞ր արուեստներն աւելի թաշակ կ'ընդունին և ո՞րոնք նուազ 27
Խրիմեանք Նիւ Եորքի 44
Հայոց թատրոն ի Պոսթըն 94
Միութիւն Լուսինեան ի Լին 120
«Ցոյս Ցարութեան Հայոց» ընկերութիւն ի Փաւթէրսըն 121
Միացեալ Բարեկամք Հայաստանի ի Պոսթըն 122, 140
Թէ որքան Հայ կայ Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ 123
Հայ գործաւորներ չարաչար կը հալածուին ի Սթանհէմ 141
Ամերիկայի Հայոց պատիւն 154
Ամերիկացիք և Ամերիկայի Հայերն 201
Հայք Օլպընիի Կրէնտ Ճիւրիին առջեւ 204
Հայերն ի Քալիֆօրնիա 218
Գործունէութիւն Ամերիկայի Հայոց մէջ 229
Ահագին Մաս-Միթինկ և Զայրացման արտայայտութիւն 236

ԶԱՆԱԶԱՆ

Ամերիկայի լրագրաց պալատին Սասնոյ կոտորածին առթիւ 227
Անգլիոյ և Ֆռանսայի հայոց եռանդուն գործունէութիւնն 240
Անգրանիկ կոնդակ օրհնութեան Տ. Տ. Մկրտիչ Ս. Կաթողիկոսի 50, 120
Անիշխանականք 147
Աստնախօսութիւն Մեծ. Տեառն Ց. Իւսկէնտէրի ի վերայ շիրմին Լեւոնի վերջնոյ 9
Անգլ-ևհայկական ընկերակցութիւն 45, 123
Ամերիկայի մամուլն և Հայկական Խնդիրն 91
Ապստամբութիւն ի Հայաստան 193
Արաքս 140
Արա 158
Ընկերվարական նոր հրատարակութիւնք 43
Թրքական կոտորածն 235
Խրիմեան Հայրիկ յաշս օտարազգեաց 167
Խրիմեան Լոռանի Ոգին 197
Խմբագրական Դիտողութիւն 93
Կարապետ Թումայեան և արհաւիրք Թրքական բանտից 134

Կարինէն Թուրքք կը Գաղթեն 25
Կոնդակ Վեհ. Հայրիկին առ Ռուսահայս 130
Համաժողով հայոց յՌուսաստ 243
Համառօտ վէպ մի -- Անմիաբանութիւն Հայոց(°) 137, 153
Հայեր յԵգիպտոս 12, 120, 172
Հայ և Թուրք ի Զարասնճագ 26
Հայուհեաց առնլութիւնն ընդդէմ Թրքաց 58
«Հայք» 82, 87, 91, 114, 156, 230, 234
Հանդէս տարեդարձի Վեհ. Հայրիկի ի Պոսթըն 78
Հարիւրամեայ Ցոբէլեան Հայ Լրագրութեան 199
Հնչակեան Դիմախօսութիւնք 117
Ջերբակալութիւն հայ ուսուցիչներու յԱյնթապ 194
Ճառ Տեառն Կարապետ Սարկաւագի ի վերայ շիրմին Լեւոնի վերջնոյ 20, 40
«Մեթոտիսթ Թայմզ» և Հայկական Խնդիրն 122
Միացեալ Նահանգք և հայոց կատարածն 238
Մոնդէսգիէօյի նախագուշակութիւնն Օսմ. կայսրութեան նկատմամբ 57
Նամակ առ Նախագահն Միացեալ Նահանգաց 15
Ն. Ե. հէրալտ Թերթն, համլին և Ալլէն, Սիւնի և «Հայք» 239
Նոր Հրատարակութիւնք 43, 94, 140
Ուղերձ Մ. Ս. Գաբրիէլեանի ի վերայ շիրմին Լեւոնի վերջնոյ 11
Պատասխան առ Հնչակ 135
Ռուս Զարհուրականք 88, 107
Ռուսիա և հիւանդ մարդն 210
Ս. Հայրապետն կը խօսի 50
Ս. Պաւլին դիմելու առաջարկ 215
Վնասակար հրատարակութիւնք 240
Տաք խօսակցութիւն մի ի Թրոյ 219
Օտար կին մի Հայացած 88
Տեղեկագիրք մեծ կատարածին 229

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ալաշկերտէն 77
Ախլաթէն 57
Աղէքսանդրիայէ 217
Բարիզէ. ուխտագնացութիւն ի Սէն Տընի 9
Բարիզէ. Հայ Ուսանողաց ընկերութիւնն 90
Բանտարկելոյն 148, 163
Գահիրէէ 120
Թրոյէ 201
Լինէ 130, 217
Կ. Պոլսէ ... 12
Կ. Պոլսէ. Սուլթան Համիտ Բ. ի Քաղաքականութիւնն 104
Պոլսական Նամականի Աներեւութէն—
Նամակ Ա. Ցաղագս մարգարէութեան 24
" Բ. Ցաղագս Զարմանալեաց 56
Կ. Պոլսէ. (Ցուսկան), մեր վիճակը 168
Պոլսէ 235
Կարինէ. Հայրենասէր Կէրէքցեանի նահատակութիւնն 105
Կարսէն 38
Կիլիկիայէն 200
Կովկասէ. ինչ բան է որ մեզ կը պակսի 136
Ճավայէ 170
Մալաթիայէ 45
Ցափանց Եփրատայ 200
Շիքակոյէ 229
Ուստըրէ 123
Ուունսաքէթէ 242
Պոսթընէ 60
Վանէ 26
Քալիֆորնիայէ 90
Քաջալերիչ թղթակցութիւնք 29

INTERNATIONAL CLINIC
111 Sand St., Brooklyn.
ՊՐՈՒՔԼԻՆ

Պրուքլինի կամրջին մօտիկ, ամեն օր բաց է այս ախտէնոէրին կամ դարմանատունն թէ ներքին և թէ վիրաբուժական հիւանդութիւններ դարմանելու համար։ Տօքթոր Զ. Ք. Թեոդորեան յանձն առած է Հայոց ձրի բժշկական քոնսուլթոյ տալ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերն, կէս օրէն յետոյ ժամ 2էն մինչեւ 4ը։ Բոլոր կառքերն ու օդաշու կառախմբերն այս դարմանատան մօտ կերթան թէ Պրուքլինէն և թէ Նիւ Եորքէն։ 111 Սէնտ Սթրիթ, Պրուքլին։

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ
Ցանձնակատար-գործակալ
ամեն տեսակ
Գրական և տպագրական արտադրութեանց և այլն.
Հաստատեալ 1890 ի Ռուսճուք

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7դ Էվլինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Բաւական թուով Պոլսոյ շէնքերու ֆօթօկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30 սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ գնով գրել հետեւեալ հասցէին.
H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ